

ԸՆԴԵՐՔՈՒՄ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՀԵՏԱԽՈՒՋՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ԳՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՌՅՈՒՋԱՆԴ ՍՆԼՎԻՆԱԳՅԱՆ

Հասարակության արտադրողական ուժերի զարգացման արդի փուլին բնորոշ է բնական ռեսուրսները նյութական արտադրության ոլորտ ներգրավելու արագ թափը: Այդպիսի պայմաններում հասարակական արտադրության արդյունավետության հետագա բարձրացումն անխզելիորեն կապված է բնական ռեսուրսների օգտագործման խնտենսիֆիկացման հետ, որի իրականացումը պահանջում է այդ ռեսուրսների տնտեսական հստակ գնահատում: Բնական ռեսուրսների, այդ թվում ընդերքում օգտակար հանածոների հետախուզված պաշարների արժեքային գնահատումը նախ պետք է կարգավորի բնական ռեսուրսների արտադրական ոլորտ ներգրավումը և դրա ճիշտ հերթականության սահմանում: Երկրորդ, պետք է առավելագույն չափով ծառայի ընդերքի ռացիոնալ օգտագործման խնդիրը լուծելուն: Երրորդ, միևնույն ռեսուրսի (հանքատեսակի) բնաաշխարհագրական տարբեր պայմաններում գտնվող հանքավայրեր հետախուզելիս և շահագործելիս պետք է տնտեսական հավասար պայմաններ ստեղծի հանքավայրերը հետազոտող, հանքաբարը արդյունահանող և վերամշակող ձեռնարկությունների համար: Զորրորդ, արդյունահանվող հանքային ռեսուրսը ժողովրդական տնտեսության մեջ մեկ այլով փոխարինելու հնարավորությունը հաշվի առնելով պետք է ապահովի հնարավոր բազմաթիվ տարբերակներից լավագույնի ճիշտ ընտրությունը: Եվ վերջապես, այդպիսի գնահատումը ընդերքի ռեսուրսների բնական հատկանիշներն առավելագույն չափով ժողովրդական տնտեսությանը ծառայեցնելու միջոցով պետք է ապահովի հասարակական աշխատանքի արտադրողականության և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացումը:

Ընդերքի հարստությունների գնահատման այս խնդիրները կարելի է լուծել միայն համապատասխան լուծանիշների համակարգի միջոցով, որտեղ ուրույն տեղ պետք է գրավեն օգտակար հանածոների, հանքանյութի ընդերքի պաշարների բացարձակ և համեմատական գնահատումները:

Ընդերքում հանքանյութի պաշարների բացարձակ գնահատումը կարելի է իրագործել դրանց տեսակների համար համապատասխան գներ սահմանելու միջոցով: Սակայն այդպիսի գներ սահմանելու ամեն մի նոր առաջարկ միշտ էլ եղել է բանավեճի առարկա, ինչպես դրա օբյեկտիվության և անհրաժեշտության, այնպես էլ գների սահմանման և որոշման մեխանիզմի գիտական հիմնավորվածության տեսակետից:

Ընդերքում հանքանյութի հետախուզված պաշարների համար գներ սահմանելու դեմ որպես հիմնական փաստարկ վկայակոչվում է երկրաբանահե-

տախուղական աշխատանքների ոչ արտադրական բնույթը՝ ելնելով դրանց ֆինանսավորման գործող կարգից, երկրաբանի աշխատանքի դրական արդյունքի հավանական լինելուց, «նյութական» արտադրանքի բացակայությունից և այլն¹։ Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ երկրաբանահետախուզական աշխատանքների միջոցով հայտնաբերված օգտակար հանածոների պաշարները լինելով բնության «ծրի բարիքներ», չպետք է մասնակցեն արդյունահանված հանքանյութի արժեքի ձևավորման պրոցեսին։ Դա բացատրում են նրանով, որ երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում արտադրանք կամ հիմնական ֆոնդեր «չեն ստեղծվում», որոնք վերագրվեն աշխատանքի միջոցներին և այդ աշխատանքները բնույթով առավել մոտ են կանգնած գիտական հետազոտություններին։ Հետևապես, ըստ այդ հետազոտողների, երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերն ինչպես արդյունահանվելիք հանքանյութի ինքնարժեքի մեջ մտցնելու, այնպես էլ ընդերքում հանքանյութի պաշարների գներ սահմանելու անհրաժեշտություն չկա, քանի որ դա իբր կհակասի արտադրության մեջ բնական ուժերն օգտագործելու անվճարելիության մասին Կ. Մարքսի հանրահայտ դրույթին։

Սակայն, ինչպես ընդգծում է Կ. Մարքսը, «բնական ուժերի անվճարելիությունը» չունի համապարփակ նշանակություն և «եթե բնության մի այսպիսի ուժ, որն սկզբնապես ոչինչ չարժե, մասնակցում է արտադրությանը, ապա նա գինը որոշելու ժամանակ չի մտնում հաշվի մեջ, քանի դեռ նրա օգնությամբ մատակարարված արդյունքը բավարարում է պահանջին։ Ինչ եթե զարգացած պրոցեսում ավելի շատ արդյունք է պահանջվում, քան կարող է պատրաստվել բնության այս ուժի օգնությամբ, ուրեմն եթե այս լրացուցիչ արդյունքը պետք է արտադրվի առանց բնության այս ուժի օգնության կամ եթե մարդկային գործակցության օժանդակությամբ, մարդկային աշխատանքի օժանդակությամբ, ապա մի նոր լրացուցիչ տարր կմտնի կապիտալի մեջ։ Հետևաբար, միևնույն արդյունքն ստանալու համար կապիտալի համեմատաբար ավելի մեծ ծախսում է տեղի ունենում։ Մյուս բոլոր հանգամանքներն անփոփոխ ենթադրելով, տեղի է ունենում արտադրության թանկացում»²։

Հետևապես, մինչ այն պահ, երբ հասարակությունն այս կամ այն բնական ռեսուրսի (այդ թվում նաև հանքային հումքի տեսակի) աղբյուր որոնելու և հայտնաբերելու համար չէր ծախսում որոշակի աշխատանք, այն ամբողջովին հանդես էր գալիս որպես «բնության բարիք» և չպետք է հաշվի առնվեր արտադրության ծախսերում։ Սակայն արտադրության էքստենսիվ զարգացման բարձր տեմպերի պայմաններում հանքային հումքի այդպիսի աղբյուրներն անսպառ լինել չէին կարող և հասարակությունը դրանց նոր կուտակումներ որոնելու ու հայտնաբերելու համար պետք է ծախսեր որոշակի աշխատանք։ Բնական ռեսուրսները արտադրական ոլորտ ներգրավելու արդի տեմպերի պահանջման դեպքում 1950 թ. համեմատությամբ 2000 թ. աշխարհում արդյունահանված օգտակար հանածոների հանույթը կավելանա 13,5 անգամ

¹ «Геология нефти и газа», 1965, № 10; «Разведка и охрана недр», 1966, № 10; «Нефтяное хозяйство», 1965, № 5 и 1966, № 2.

² Կ. Մարքս, Կապիտալ, երրորդ հատոր, երկրորդ մաս, Նրեան, 1949, էջ 283։

(1900—1950 թթ. այն ավելացել էր 3,4 անգամ)³։ Օգտակար հանածոների արդյունահանման այսպիսի բարձր տեմպերի պայմաններում՝ դրանց նոր հանքավայրեր հայտնաբերելու ու արտադրական ոլորտ ներգրավելու համար արդեն ծախսվում է և ապագայում էլ կպահանջվի ծախսել հսկայական հասարակական աշխատանք։ Աշխատանքային այդ ծախսերի զգալի աճը և հասարակական ընդլայնված վերարտադրության ընթացքում դրանց տեղն ու նշանակությունը թելադրում են վերանայել հայտնաբերված և արտադրական ոլորտ ներգրավված հանքային կուտակումների արտադրատնտեսական բնույթի մասին վերը նշված տեսակետները։ Եվ պատահական չէ, որ վերջին երկու տասնամյակներում երևան եկան հետազոտություններ, որոնցում հիմնավորվում էին ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների արտադրական բնույթը, այնպես էլ հայտնաբերված պաշարների տնտեսական գնահատման, մասնավորապես, դրանց համար դնել սահմանելու անհրաժեշտությունը⁴։

Մեր երկրում երկրաբանահետախուզական աշխատանքների ֆինանսավորման աղբյուրների և ձևերի փոփոխությունները վկայում են, որ այդ հարցը դեռևս վերջնականապես չի լուծվել։ Այսպես, 1920-ական թվականներին երկրաբանահետախուզական աշխատանքների բոլոր ծախսերը մտցվում էին արդյունահանված օգտակար հանածոների ինքնարժեքի մեջ։ Հետագայում, արդեն 1930-ական թվականներին, դրանք ամբողջովին ֆինանսավորվում էին պետական բյուջեից, շրջանցելով արդյունահանված հանքանյութի ինքնարժեքը։ Սկսած 1940 թ. սկզբներից գունավոր մետաղագործության մեջ արդյունաբերական շահագործման հանձնված հանքավայրերում օգտակար հանածոների պաշարների C_1 կատեգորիայից $A+B$ կատեգորիայի անցման երկրաբանահետախուզական աշխատանքները ֆինանսավորվում էին կառուցվող լեռնահանքային ձեռնարկությունների նախահաշիվներով, կապիտալ ներդրումների տեսքով։ Այդ հանքավայրերի շահագործումից հետո դրանք ամորտիզացիոն հատկացումների ձևով մտցվում էին նաև լեռնահանքային ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ։

1950-ական թվականներին երկրաբանահետախուզական աշխատանքների զգալի մասը ֆինանսավորվում էր ուղղակի պետական բյուջեից (անվերադարձելիության սկզբունքով), իսկ մյուս մասը՝ կենտրոնացված կապիտալ ներդրումների հաշվին։ Այսպես, կենտրոնացված կապիտալ ներդրումների հաշվին ֆինանսավորվում էր նավթի երկրաբանահետախուզական աշխատանքների այն մասը, որ կապված էր նավթաբեր երկրաբանական շրջաններում և ստրուկտուրաներում խորը հորատանքների հետ։ Հանքավայրերի մանրամասն հետախուզման փուլում կապիտալ ներդրումների ձևով էին ֆինանսավորվում նաև այն լեռնային կապիտալ փորվածքների ծախսերը, որոնք հանքավայրերի շահագործման նախագծերում նախատեսվում էին օգտագործել հանքանյութի արդյունահանման կամ այլ նպատակներով։ Այդ փորվածքների

³ Н. В. Мельников, Проблемы использования природных ресурсов, М., 1967, стр. 12.

⁴ Ю. В. Яковец. Методология ценообразования в горнодобывающей промышленности, М., 1964; С. Г. Струмилин, Оценка «даровых благ» природы («Вопросы экономики», 1967, № 8); С. Я. Каганович, О цене разведочных запасов минерального сырья в недрах («Советская геология», 1968, № 10).

արժեքը մտցվում էր լեռնահանքային ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի մեջ և ամորտիզացիայի ձևով արտացոլվում թողարկվող արտադրանքի ինքնարժեքում:

1967 թ. հուլիսի 1-ից մտցվեց նոր կարգ և հնարավոր դարձավ ընդերքի հետախուզված պաշարներն արդյունահանելիս երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերի մի մասն արտացոլել ինչպես արդյունահանող ձեռնարկությունների արտադրանքի՝ արդյունահանված հանքանյութի ինքնարժեքում, այնպես էլ դրա մեծածախ գնելու: Այս ճանապարհով, 1967 թ. մեծածախ գների միջոցով մասնավորապես նախատեսվում էր փոխհատուցել երկրաբանահետախուզական աշխատանքների բոլոր ծախսերի մոտ մեկ քառորդը: Այդ ծախսերը լեռնահանքային ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ է մտցվում կայուն դրույքներով՝ մասհանումներ կատարելու միջոցով: Այս դրույքների չափերը 1975 թ. հունվարի 1-ից բարձրացվեցին, որը հնարավորություն ընձեռեց փոխհատուցել ամբողջ երկրում երկրաբանաորոնողական ու հետախուզական աշխատանքների վրա կատարված ծախսերի մոտ կեսը: Բացի այդ, օգտակար հանածոների արդյունահանված քանակի յուրաքանչյուր միավորի համար մտցվեց նաև ռենտայի վճար: Սակայն երկրաբանահետախուզական աշխատանքների ֆինանսավորման գործող կարգը (պետական բյուջեից՝ անվերադարձելիության սկզբունքով), ինչպես նաև երկրաբանահետախուզական կազմակերպությունների և լեռնահանքային ձեռնարկությունների միջև տնտեսական կապի ձևերը մնացին անփոփոխ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերի փոխհատուցման դրույքները փաստորեն ունեցան ներճյուղային նշանակություն, նպաստավոր պայմաններ չստեղծելով միջյուղային տնտեսական կապերի ստեղծման ու ամրապնդման համար: Փոխհատուցման այդ դրույքների չափը որոշված է վերջին 8—10 տարիների ընթացքում ամբողջ երկրում օգտակար հանածոների տեսակների որոնման ու հետախուզման աշխատանքների բոլոր ծախսերի և այդ ընթացքում հայտնաբերված ու հետախուզված պաշարների (գունավոր մետաղներին ու հազվագյուտ և ցրված էլեմենտներին՝ $A+B+C_1$ կատեգորիայի, իսկ սև մետաղներին՝ $A+B$ կատեգորիայի) հավելածի հարաբերության միջոցով:

Այնքանով, որքանով հասարակական արտադրության ընդլայնված վերարտադրությունը պահանջում է նաև հանքային հումքի ռեսուրսների ընդլայնված վերարտադրություն (մասնավորապես, հանքանյութի տեսակների հետախուզված պաշարների առաջանցիկ տեմպերով ավելացումը), երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքների ծախսերը ևս առաջիկայում շեղտակիորեն կավելանան (այժմ դրանք անցնում են տարեկան 3 մլրդ ռուբլուց)⁶: Դա պայմանավորված է ինչպես օգտակար հանածոների ավելի մեծ պաշարներ հայտնաբերելու և հետախուզելու, այնպես էլ բնակչիմայական առավել բարդ պայմաններում երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու հետ: Հասարակական ամբողջական արդյունքի ընդլայնված վերարտադրության պայմաններում հանքային հումքի ռեսուրսների որոնման և հետախուզ-

⁶ Ю. В. Яковец, Движение цен минерального сырья («Вопросы экономики», 1975, № 6, стр. 6).

⁷ Նույն աեղում, էջ 7:

⁸ В. Сохоров, Е. Кантор, Характер геологоразведочной деятельности («Вопросы экономики», 1975, № 8, стр. 136).

ման ծախսերի բաժինը ամբողջ հասարակական աշխատանքի մեջ զգալիորեն կմեծանա: Հետևապես, այդ աշխատանքը չի կարող շրջանցել ինչպես հասարակական ամբողջական արդյունքը, այնպես էլ ազգային եկամուտը, որոնց ստեղծմանն այն մասնակցում է անմիջականորեն:

Երկրաբանահետախուզական աշխատանքների արտադրական լինելն ընդունող տնտեսագետների խմբում բացակայում է հանքավայրերի որոնման ու հետախուզման ծախսերի բնույթի և արդյունահանված հանքանյութի ինքնարժեքում առ ծախսերն արտացոլելու եղանակի շուրջ տեսակետների միասնականություն: Նրանց մի մասի կարծիքով որոնողական և հետախուզական աշխատանքների ծախսերն օգտակար հանածոների արդյունահանող ճյուղի հիմնական ֆոնդերի ստեղծմանն ուղղված նախնական կապիտալ ներդրումներ են⁸: Մյուսները դառնում են, որ ընդերքում օգտակար հանածոների հայտնաբերված ու հետախուզված պաշարներն արդյունահանող ձեռնարկությունների համար ավելի շուտ աշխատանքի առարկա են և բնույթով ավելի մոտ են կանգնած հումքին⁹: Տնտեսագետների մեկ այլ խումբ գտնում է, որ երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքների արդյունքում ստեղծվում են ինչպես հիմնական, այնպես էլ շրջանառու ֆոնդերի տարրեր, որոնք անհրաժեշտ են հանքային հումք արդյունահանող ամեն մի ձեռնարկությունում արտադրության կազմակերպման համար: Օրինակ, նավթի արդյունահանման ժամանակ հետախուզական այն հորատանցքերը, որոնք նավթաբեր կամ դադարեր են, արդյունահանող ձեռնարկություններին են հանձնվում և դրանց հաշվեկշիռներում հաշվի են առնվում որպես հիմնական ֆոնդեր: Միաժամանակ, այդ հորատանցքերի օգնությամբ հայտնաբերված և հետախուզված նավթի ու դրան պաշարների արժեքը, որը երկրաբանահետախուզական կազմակերպությունների աշխատանքի արդյունքն է, հանձնարարվում է վերագրել արդյունահանող ձեռնարկությունների շրջանառու միջոցներին¹⁰:

Ընդերքի հարստությունների երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքների վերջնական արդյունքը մարդու կողմից երկրի ընդերքի որոշակի հատվածի կառուցվածքի ճանաչողության հարստացումն ու այդ հիման վրա օգտակար հանածոների այնպիսի հնարավոր կուտակվածքների առանձնացումն է, որոնք կբավարարեն ժողովրդական տնտեսության ճյուղերի կողմից սվլալ պահին հանքատեսակների որակական ու այլ պարամետրերի նկատմամբ առաջադրվող պահանջներին: Այդ աշխատանքների արդյունքներն ընդ-

⁸ М. М. Бреннер, Некоторые проблемы экономики геологоразведочных работ («Вопросы экономики», 1959, № 12, стр. 107); М. Б. Добровольский, Ф. Ф. Дунаев и др., Основные вопросы экономики поисков и разведки нефтяных и газовых месторождений, Книжное издательство, 1966, стр. 42; Е. Л. Кантор, Вопросы геологоразведочных работ и стоимость подготовки запасов нефти и газа, научно-экономический сборник («Экономика нефтедобывающей промышленности», 1968, № 1); Ա. Թադևոսյան, Հանքավայրերի հետախուզման տնտեսական էֆեկտիվության հարցերը, Երևան, 1962, էջ 31—33 և ուրիշներ:

⁹ И. М. Бройде, О некоторых вопросах себестоимости добычи нефти и газа («Нефтяное хозяйство», 1965, № 5); С. Ф. Горкин, О затратах на геологоразведочные работы и порядке их возмещения («Нефтяное хозяйство», 1965, № 2).

¹⁰ Н. Н. Косинов, О возмещении затрат на геологопоисковые и геологоразведочные затраты в себестоимости и ценах на нефть («Вопросы ценообразования в социалистическом хозяйстве», М., 1968, стр. 89—90).

հանրացված տեսքով քանակապես դրսևորվում են օգտակար հանածոների հետախուզված որոշակի որակի պաշարների տեսքով, որոնք ունեն սպոտենցիալ սպառողական արժեք»¹¹։ Արդյունահանող ճյուղերում արտադրանքի, արժեքի ստեղծմանը մասնակցող երկրաբան-հետախույզի աշխատանքը հանքանյութի ընդերքում ունեցած այդ սպոտենցիալ սպառողական արժեքը՝ միանգամից չի վերածում իրականի (ռեալի), այլ բացահայտում, ցույց է տալիս միայն դրա հնարավորությունը։ Այն իրական սպառողական արժեք է վերածվում միայն հանքավայրերը շահագործելու համար արդյունահանող ձեռնարկություններին հանձնելուց հետո։ Սակայն դա չի բացահայտում, այլ ընդհակառակը, պայմանավորում է երկրաբանահետախույզական աշխատանքների արդյունքի արժեքային դնահատումը։

Հանքատեսակների (ինչպես հանքաքարի, այնպես էլ խտանյութերի, կիսաֆաբրիկատների և այլնի) գների հիմքում պետք է ընկնեն դրանց արտադրության հասարակականորեն անհրաժեշտ բոլոր ծախսերը։ Այս տեսակետից ևս երկրաբանահետախույզական փուլում ծախսված աշխատանքի արժեքային գնահատումը դառնում է անհրաժեշտություն։ Այդպիսի գնահատման ուղիններից է ընդերքում օգտակար հանածոների պաշարների միավորի համար գների սահմանումը։ Համանման գների անհրաժեշտության և դրանց հաշվարկման մեխանիզմի շուրջ մասնագիտական գրականության մեջ վերջին տարիներին արվեցին մի շարք, երբեմն իրարամերժ, անգամ հակադիր սկզբունքների վրա հիմնված առաջարկներ¹²։

Ընդերքում հանքային հումքի պաշարների համար հանձնարարվող մեծածախ գների հիմքում պետք է դրվեն դրանց հայտնաբերման երկրաբանահետախուզական աշխատանքների լրիվ ծախսերը և լեռնային դիֆերենցիալ եկամուտն այն չափով, որչափով այն կառաջանա վատթարագույնի համեմատ բնաաշխարհագրական միջինացված պայմաններում գտնվող հանքավայրերը շահագործելիս։ Այսպիսի մեծածախ գները հնարավորություն կընձեռեն ամբողջ երկրի կամ տնտեսական շրջանի կտրվածքով ընդերքի հարստությունները գնահատել արժեքային արտահայտությամբ և դրանք հաշվի առնել երկրի ազգային հարստության հաշվարկներում։ Իսկ հնարավորություն կտա հեռանկարային պլաններում սահմանել ինչպես ամբողջ ժողովրդական տնտեսության, այնպես էլ արդյունահանող և վերամշակող ճյուղերի զարգացման առավել ռեալ տեմպեր ու համամասնություններ։

Հանքային հումքի հետախուզված բալանսային պաշարների համար գների սահմանումով հնարավոր կլինի.

ա) որոշել օգտակար հանածոների առանձին տեսակների նկատմամբ ժողովրդական տնտեսության պահանջարկը բավարարելու համար նոր հանքավայրեր որոնելու ու հետախուզելու նպատակով երկրաբանական ծառայությունը տրամադրվելիք միջոցների ծավալը,

¹¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 11, стр. 267.

¹² Н. А. Хрущов, Основные показатели экономической эффективности затрат на геологоразведочные работы и подход к определению цены разведанных запасов минерального сырья в недрах («Советская геология», 1967, № 8, стр. 52—60); В. А. Перваго, Стоимостная оценка разведанных запасов минерального сырья в недрах («Разведка и охрана недр», 1971, № 7); М. И. Агошков, В. А. Перваго, Н. А. Хрущов, Цена разведанных запасов полезных ископаемых («Разведка и охрана недр», 1974, № 5).

ր) արդյունահանված օգտակար հանածոների ինքնարժեքում և գներում ուղղակիորեն և առավել ճիշտ արտացոլել երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերը,

գ) բարձրացնել երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունավետությունը:

Հաշվի առնելով երկրաբանահետախուզական աշխատանքների աշխատատարությունը, այդպիսի մեծածախ գներն առավել նպատակահարմար է սահմանել ՍՍՀՄ ԳԱ «Գնագոյացման գիտական խորհրդի» հավանության արժանացած «վերարտադրության գնի» սկզբունքի հիման վրա¹³, հաշվի առնելով դնադոյացման օբյեկտի (հանքանյութի ընդերքում ունեցած պաշարների) առանձնահատկությունները, պարզեցված հետևյալ սխեմայի տեսքով.

$$L_0 = (C + H \cdot 3 + E_n \cdot \Phi) \cdot K + R,$$

որտեղ C —հեռանկարում հանքային հումքի բալանսային պաշարների աճի համար անհրաժեշտ երկրաբանահետախուզական աշխատանքների միջին մյուլային տեսակարար ծախսերն են ուղղված. $C = C_n + C_p$, որտեղ C_n և C_p այդ նույն ծախսերն են հեռանկարում, համապատասխանորեն օգտակար հանածոների որոնման ու մանրակրկիտ հետախուզման համար, ուղղված, 3 —հեռանկարում հանքավայրերի որոնման ու հետախուզման համար անհրաժեշտ կենդանի աշխատանքի (աշխատավարձի) տեսակարար ծախսերն են, H —դուրս եկամտի հասարակական նորման է, որը մտցվելու է դնի մեջ աշխատավարձին համամասնորեն (դրա ժողովրդատնտեսական արդյունավետության մասնավորում), E_n —զուտ եկամտի նորման է, որը գնի մեջ հաշվի է առնվելու առկա արտադրական ֆոնդերի մեծությանը համամասնորեն (զրա ժողովրդատնտեսական արդյունավետության մակարդակով), K —գործակից է, որը հաշվի է առնում երկրաբանահետախուզական աշխատանքների ծախսերի դիֆերենցումը ըստ բալանսային պաշարների առանձին կատեգորիաների (A , B և C_1): Նթե « B » կատեգորիայի հետախուզված պաշարների համար ընդունենք $K=1$, ապա A -ի դեպքում $K>1$, իսկ C_1 -ի դեպքում $K<1$: R —տեսակարար լեռնային դիֆերենցիալ եկամուտն է այն շահիով, որ շահով այն կառաջանա վատթարագույնի համեմատ բնաաշխարհագրական միջինացված պայմաններում գտնվող հանքավայրերը շահագործելիս:

Նթե մեկ հանքավայրի սահմաններում հետախուզված են օգտակար հանածոների մի քանի տեսակներ, ապա դրանց միջև երկրաբանահետախուզական աշխատանքների փաստացի ծախսերը և արտադրական ֆոնդերի արժեքը կրտսն են հանքատեսակների հետախուզման աշխատատարությանը և կապիտալատարությանը համամասնորեն¹⁴:

Բնաաշխարհագրական տարբեր պայմաններում գտնվող հանքավայրեր շահագործելիս ընդերքում հանքային հումքի հետախուզված պաշարների համար միասնական գների կիրառման դեպքում լեռնահանքային ձեռնարկությունները կգտնվեն տնտեսապես անհավասար պայմաններում: Այսպես, նթե.

¹³ Այդ մասին տե՛ս «Научные основы планового ценообразования» (теория, методология), под ред. В. Н. Дьяченко, М., 1968, стр. 311.

¹⁴ Մանրամասն տե՛ս Բ. Սելվինսկայն, Մխսերի բաշխումը համակցված արտադրության բաղադրիչների միջև, Նրեան, 1971:

առավել բարենպաստ բնաաշխարհագրական պայմաններում գտնվող հանքավայրերը շահագործելիս արդյունահանվող հանքանյութը գնահատվի միջին պայմանների համար սահմանված գներով, ապա լեռնահանքային ձեռնարկություններում սահմանված բարձր գների հաշվին շահույթը արհեստականորեն կմեծանա: Մյուս կողմից, խիստ անբարենպաստ պայմաններում գտնվող հանքավայրերից հանքանյութ արդյունահանելիս, առանց որի հնարավոր չէ ծածկել տվյալ հանքատեսակի նկատմամբ ժողովրդատնտեսական պահանջարկը, արդյունահանող ձեռնարկությունների դեպի մասը կդառնա «վնասաբեր» կամ նվազ շահութաբեր: Հետևապես, ընդերքում հանքանյութի համար սահմանվող միասնական մեծածախ գների կիրառումը դառնում է սահմանափակ: Այդ գները կարելի է օգտագործել ազգային հարստության մեջ ընդերքի հարստությունների հաշվառելու, երկրաբանահետախուզական աշխատանքների ընդլայնված վերարտադրությունն ապահովելու և այլ նպատակներով:

Արդյունահանող ձեռնարկություններն ընդերքի պաշարներն օգտագործելու համար պետք է վճարեն հանքանյութի համար սահմանվելիք համապատասխան հաշվարկային գներով: Ընդերքում օգտակար հանածոների պաշարների այդպիսի հաշվարկային գները պետք է հնարավորության սահմաններում տնտեսապես հավասար պայմաններ ստեղծեն տարրեր որակի հանքային հումք օգտագործող ձեռնարկությունների համար: Կ. Մարքսը գրում է. «...իրերի մեջ պարունակված բոլոր տարրեր օգտակար աշխատանքների գումարը դուրս գրելուց հետո միշտ մնում է մի որոշ նյութական սուբստրատ, որ գոյություն ունի բնությունից, առանց մարդու որևէ աջակցության»¹⁵: Արդյունահանող ձեռնարկություններից յուրաքանչյուրի թողարկած արտադրանքում աշխատանքային ծախսումների և այդ ձևով նյութական սուբստրատի տարրեր փոխհարաբերություններն էլ հենց պայմանավորում են աշխատանքի տարբեր արտադրողականություն, որը, վերջին հաշվով, արտացոլվում է լեռնահանքային դիֆերենցիալ եկամտի մեջ:

Պաշարների միավորի օգտագործման հաշվարկային գները, որոնցում հաշվի են առնվելու հանքային հումքի արդյունահանման բնաաշխարհագրական կոնկրետ պայմանները, վերը նշված մեծածախ գներից կշեղվեն այդ պայմանների՝ ձևով նյութական սուբստրատի փոփոխությանը համամասնորեն: Եթե հանքանյութի պաշարները գտնվում են բնաաշխարհագրական առավել նպաստավոր պայմաններում և աշխատանքային համեմատաբար քիչ ծախսումներով կարելի է արդյունահանել ավելի մեծ քանակությամբ օգտակար հանածո, ապա ընդերքի հանքային հումքի օգտագործման համար պետք է սահմանել առավել բարձր հաշվարկային գներ: Բնականաբար, ոչ նպաստավոր պայմաններում միավոր արտադրանքի արդյունահանումը կպահանջի առավել մեծ ծախսեր, հետևապես և ընդերքի հանքային հումքն օգտագործելու գինը պետք է սահմանվի ավելի ցածր:

Հաշվարկային այս գները սահմանելիս բնական ու աշխարհագրական առանձին գործոնների (հանքային մարմնի տեսքի ու տեղադիրքի, օգտակար հանածոների պարունակության, հանքանյութը շրջապատող ապառների կարծրություն, հանքավայրի աշխարհագրական պայմանների և այլն) ազդեցությունը կարելի է հաշվի առնել շահագործվող, ինչպես նաև մանրամասն

¹⁵ Կ. Մարքս, Կապիտալ, առաջին հատոր, Երևան, 1954, էջ 49:

հետախուզված հանքավայրերի հարուստ փաստացի նյութերի հիման վրա, երկկողմանի կամ բազմակի համահարաբերակցական կապերի միջոցով:

Հանքային հումքի հետախուզված պաշարների հանձնարարվող մեծածախ ու հաշվարկային գներն էապես տարբերվում են հայթայթող արդյունաբերության առանձին ճյուղերում արդյունահանված հանքաքարի կամ դրա խտանյութերի կիրառվող հաշվարկային և մեծածախ գներից (երկաթահանքային, նավթի, գազի արդյունաբերությունում և այլն): Դրանց միջև հիմնական տարբերությունը նախ և առաջ սահմանված գների օբյեկտն է: Եթե վերոհիշյալ ճյուղերում այդ գները սահմանելու օբյեկտն արդեն արդյունահանված հանքային ռեսուրսն է, կամ դրա խտանյութը, ապա այստեղ հանձնարարվող մեծածախ ու հաշվարկային գները վերաբերում են այդ ռեսուրսներին՝ ընդերքում: Բացի այդ, եթե վերոհիշյալ ճյուղերում հաշվարկային գների հիմքում ընկած են ընդերքից հանքանյութն արդյունահանելու և վերամշակելու անհատական (կամ լավագույն դեպքում միջին խմբային) ծախսերը, ապա ընդերքում հանքային հումքի գնահատման նպատակով առաջարկվող հաշվարկային գները, ինչպես նշվեց, արտացոլում են միայն երկրաբանահետախուզական աշխատանքների լրիվ ծախսերը և այդ ռեսուրսներն օգտագործելիս ստացվելիք լրացուցիչ դիֆերենցիալ եկամուտը:

Բացի հանքանյութի պաշարների մեծածախ և հանքանյութի օգտագործման վերը նշված դնբրից, օգտակար հանածոների պաշարներ որոնելու և հետախուզելու համար երկրաբանական կազմակերպությունների ծախսերը փոխհատուցելու և երկրաբանական ծառայության աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է սահմանել ընդերքում հանքանյութի պաշարների միավորի որոնման ու հետախուզման ծառայության հաշվարկային գին: Դա բնույթով կհամապատասխանի որոշակի արտադրական ծառայությունների՝ հանքավայրերի որոնման և հետախուզման համար սահմանվող գներին:

Որոնման ու հետախուզման ծառայության հաշվարկային այս գների հիմքում պետք է ընկած լինեն կոնկրետ հանքավայրում կամ հանքադաշտի սահմաններում օգտակար հանածոների տեսակների որոնման ու հետախուզման ծախսերը: Համապատասխան միներալոգիային կամ գերատեսչության կողմից սահմանվող այդ գներում պետք է նախատեսվի նաև շահույթ՝ արտադրության այս ճյուղի համար սահմանված միջին նորմատիվի չափով:

Օգտակար հանածոների պաշարների որոնման և հետախուզման հաշվարկային այդ գների կիրառումը կնպաստի երկրաբանական ծառայության ոլորտում տնտեսաշարժի արմատավորմանը և այդ ուղիով երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Լինելով անհատական գների տարբերակներից մեկը, որոնման ու հետախուզման հաշվարկային գները տնտեսապես հավասար պայմաններ կապահովեն բնակչությանը տարբեր պայմաններում աշխատող երկրաբանական կազմակերպությունների համար:

Ընդերքում հանքային հումքի բալանսային պաշարների երկգնացուցակային՝ մեծածախ և որոնման ու հետախուզման հաշվարկային գների կիրառումով հնարավոր կլինի կատարելագործել նաև երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպումը: Այդ գները պրակտիկայում ներդնելիս անհրաժեշտ կլինի օգտակար հանածոների առանձին տեսակների որոնման ու

հետախուզման նպատակով (օրինակ, սև մետաղների, էներգետիկ հումքի և այլն) ստեղծել միութենական տնտեսաշարակային երկրաբանահետախուզական մասնագիտացված կազմակերպություններ (միավորումների, տրեստների և այլնի տեսքով)։ Այդ կազմակերպությունների ներսում պետք է ապահովվի հետևյալ պայմանը.

$$\sum_{i=1}^n \sum_{j=1}^m B_{ij} \cdot L_{0ij} = \sum_{i=1}^n \sum_{j=1}^m B_{ij} \cdot L_{ij} + \Pi + P$$

որտեղ

B_{ij} —օգտակար հանածոյի i -րդ տեսակի j կատեգորիայի բալանսային պաշարներն են, L_{0i} և L_i —օգտակար հանածոյի i -րդ տեսակի j կատեգորիայի մեծածախ և հաշվարկային գներն են, Π —տվյալ կամ նոր երկրաբանական շրջաններում տվյալ հանքատեսակի որոնման համար անհրաժեշտ միջոցների գումարն է, P —ռեզերվային գումար է, որի անհրաժեշտությունը պայմանավորված է առանձին հանքավայրերում երկրաբանական հետախուզական կազմակերպությունում հանքավայրերում երկրաբանական հետախուզումը լրացնելու, կամ առանձին դեպքերում հաշվարկային գները բարձրացնելու և այլնի համար, n —օգտակար հանածոների տարատեսակներն են, j —օգտակար հանածոների պաշարների տեսակներն են (A , B և C_1)։

Այս պայմանը նշանակում է, որ վերադաս տնտեսաշարակային երկրաբանական կազմակերպությունում հանքավայրերի որոնման և հետախուզման ծախսերի գումարը չպետք է գերազանցի օգտակար հանածոների հետախուզված պաշարների իրացումից ստացվող հասույթը (բյուջեից կամ ուղղակի իրացումից ստացվող հասույթը)։

Օգտակար հանածոների հետախուզված պաշարների գների հանձնարարվող համակարգի կիրառումը կդառնա ընդերքի հարստությունների ռացիոնալ օգտագործումը կարգավորող հիմնական տնտեսական լծակներից մեկը։ Այն միաժամանակ մեծ չափով կնպաստի երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և մեր երկրի տարածքում արտագրողական ուժերի տեղաբաշխմանը։

ОПРЕДЕЛЕНИЕ ЦЕН НА РАЗВЕДАННЫЕ ЗАПАСЫ МИНЕРАЛЬНОГО СЫРЬЯ В НЕДРАХ

БЮЗАНД СЕЛВИНАЗЯН

Резюме

Для современного этапа развития производительных сил общества характерен высокий темп вовлечения природных ресурсов в материальное производство. В этих условиях дальнейшее повышение эффективности общественного производства неразрывно связано с интенсификацией использования этих ресурсов, чем и обуславливается необходимость их четкой экономической оценки.

Одним из основных направлений такой оценки является установление цен на разведанные запасы полезных ископаемых в недрах. Целесообразно установить их следующие разновидности: а) *оптовые цены на разведанные запасы*, в основе которых должны лежать полные зат-

раты на поисково-разведочные работы и горный дифференциальный доход в том размере, в каком он образуется при эксплуатации месторождений, находящихся в средних природно-географических условиях по сравнению с худшими; б) *расчетные цены на разведанные запасы*, отличающиеся от соответствующих оптовых цен тем, что в них учитываются конкретные природно-географические условия залегания ископаемого сырья в недрах; в) *внутриотраслевые хозрасчетные цены на разведываемые запасы*, включающие расходы по выявлению и разведке запасов геологическими организациями (в основу этих цен следует заложить затраты на поиски и разведку отдельных видов полезных ископаемых в конкретных месторождениях и рудных полях).

Применение рекомендуемой системы цен на разведанные запасы минерального сырья в недрах послужит важным экономическим рычагом, регулирующим рациональное использование богатства недр и обеспечивающим условия перевода геологической службы на полный хозрасчет.